



630
L. II. 4





ՀԱՅԻՐԱՅԻՆ ԳԵՂԱՐՈՒՄ

ԱՐԴԱՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻՒ 180

15 ՅՈՒՆԻՍԻՐ 1915

ԿՐՕՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ
ՇԱՐԱԹԱԹԵՐԹ
ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆԻ

Անոնք որ կը փափաքին Արձագանգի պակաս թիւերը լրացնել, իւրաքանչիւր թիւի համար մէյլէկ դահեկան ղրկելու են :

ԱԶԳԱՅԻՆ ՍԻՒՆՀՈՂՈՍ Կ. ՀԱՅՈՑ

Տպագրութիւնը աւարտած է և կը ծախուի 40 դահեկանի:
Գաւառներու համար փոսքայի ծախք 10 դահեկան:



ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԴՐԱԿԱՆ
ՇԱԲԱԹ-ԱԼԹ-ԵՐԹ

Հիմնդրորդ տարի 15 Յունուար 1915 թիւ 180

«Մրբազան Քահանայապետն Պիոս Ժ. կը մաղթէ որ Կաթողիկէ Արձագանգ շաբաթերը բա-
րունակէ Հայաստանի կաթողիկէ ժողովրդոց մէջ, մանաւանդ ի զաւտուս, փրկարար առաքելութիւն մը կա-
սարել, ի բարգաւաճման կրօնից եւ ի հոգեւոր օգուտ հոգիներու: Այս մաղթանաց արդիւնաւորութեան համար
Մրբազան Հայրն սրբազին կ'օրհնէ յիշեալ Շաբաթերը, ինչպէս նաեւ ամոր խմբագիրներն եւ ընթերցողները»:

Նամակ Կարգ. Մերի տէլ Վալի, առ Ամեն. Տ. Պօղոս Պետրոս ԺԳ. Թերզեմ Հայ-Կաթողիկէ Պատրիարք Կիլիկիոյ.
23 Նոյեմբերի 1912, թիւ 60780 քուսմամտաւ:

ԴԵՊՔԵՐ ԵՒ ՍԿՋՐՈՒՆՔՆԵՐ

ԱՄԱՆՈՐ

Սահեցաւ անցաւ նաեւ 1914 տա-
րին, և իւրաքանչիւր մահկանացուի կե-
նաց ծառէն ցամաքեցաւ ճիւղ մըն ալ:
Ի՞նչ ժառանգութիւն մնացած է
1914 տարիէն:

Քէն և վրէժ, զայրոյթ և կռիւ, կիրք
և արիւնհեղութիւն, ջնջում և մահ:

Ահաւոր փոթորիկ մը անցաւ տիե-
զերքի վրայէն. և աշխարհ սասանեցաւ
թնդանօթներու գողումէն, արեան հե-

ղեղներ խաղացին. անյատակ անդունդ-
ներ, փոսեր լեցուեցան լեռնակուտակ
դիակներով: Ծիւղալային մեղերայի պէս
կատղած և սովալլուկ արշաւեց, վազվա-
զեց մահը անհուն միջոցներու մէջ, և
հնձեց մարդկութեան թարմ ծաղիկը,
զարնանաբոյր երիտասարդութիւնը:

Աննախընթաց, և հնար է, անապա-
գայ պատերազմ մը՝ լաց ու ողբով, կոծ
ու սուգով համակեց բովանդակ տիե-
զերքը:

Բայց ահա խաղաղութեան օրեր են
եկած. ա՛յն խաղաղութեան, զոր Տէրն
փառաց և թագաւորն թագաւորաց երկ-
նային գաւառներէն թերաւ, երբ ան-
խմանալի զիջումով ծնաւ ի Կուսէն. ա՛յն

խաղաղութեան զոր Զուարթունք հըր-
ճուանօք երգեցին և աւետեցին:

Բայց և այդ Թագաւորն ըսած է
նոյնպէս. Իմ քաղաքս ինչպէս աշ-
խարհիկն յէ: — Ո՛վ որ սուր կ'առնու,
սրով պիտի կորսուի: — Խաղաղութիւն
կը թողում ձեզի:

Եւ հրեշտակները ա'յդ խաղաղու-
թիւնը աւետեցին... խաղաղիկ և խո-
նարհ հովիւներու:

Բայց ահա՛ ամբարտաւանութիւնը
կուրցուցած է մարդկութիւնը. տիրելու
և հրամայելու անզուսպ տենչանք, որ
տրամաբանօրէն և անդիմադրելիօրէն կը
բղխի համայնատարած անկրօնութենէն,
ինչպէս թոյնը մոլախինդէն: Գետնասող
մարդկութիւնը համակ մարմին եղած,
աստուածուբաց ախաբու և սրբապիղծ
ընկերութիւններու անձնատուր եղաւ. և
փոխանակ ջրհեղեղի խաղաղին արեան
հեղեղներ: Փարաւոնի պէս ամբարշտելով
կը ժպրհին անպատկառ ճակատով հար-
ցնել. Ո՛վ է նա... Ո՛յ գիտեմ զՏէրն. և
աննման հարուածներով կը կեղեքի
մարդկութիւնը:

Ո՛վ հէգ Ամանոր, ամէն կերպ թըշ-
ուառութեանց նշաւակ. ոգեսպառ տագ-
նապող մարդկութեան ո՛վ պիտի կար-
կառէ օգնութեան աջը:

Պատժապարտն նինուէ՛ սգակիր և
քրճաղգեաց նստաւ մոխրոյ վրայ. Ահա
աշխարհի չարութեան աղաղակը զայ-
րացուց Ամենակալը. պէտք է անոր բար-
կութիւնը իջեցնել, ապաշխարելով: Այս
է Լուրտի Տիրամօր կրկնածը, երեքնա-
ծը. Ապաշխարութիւն:

Երբ սպաշխարեալ յոյսի, ըսաւ
Տէրը, ամենեւի աշ լոյնպէս պիտի կոր-
սուի:

Այլ ո՛վ պիտի հնչեցնէ խաղաղու-
թեան ձայնը:

Ահագին ուժեր իրարու դէմ ճակա-
տած են՝ զիրար բնաջինջ ընելու հա-
մար: Կայսրներ և Թագաւորներ վրէժ-
կը շնչեն. և Արէս կը մղեգնի ամենու-
րեք: Չմնաց հեղինակաւոր ձայն մը որ
հնչէ՝ խաղաղութիւնը հաստատելու հա-
մար: Վա՛յ աշխարհի:

Բայց այն բլրոյն վրայ, ուր խա-
ղաղութեան Մեծ և Հեզ Թագաւորին
Փոխանորդը կեցած է Դէտ աստուա-
ծակարգ, ծագեց Ամենակալին փառքը:
Վատիկանի Մերունի Հովուապետը, երբ
հնչեց շեփորին և Թնդանօթին որո-
տընդոստ շփնդը, աստուածային հե-
ղութեամբ և հայրական հեղինակու-
թեամբ հնչեցուց տիեզերքի վրայ իր
խաղաղութեան ձայնը, ինչպէս իր և մեր
Տէրը Քրիստոս վերջին ընթերաց մէջ
մրմնջած էր. Իմ խաղաղութիւն կը թո-
ղում ձեզի. և ճիշդ ինչպէս որ իր և
մեր Տէրը Քրիստոս այդ խաղաղութիւ-
նը մարդոց արդիւնաւորելու համար իր
կեանքը զոհեց, նոյնպէս և իր սիրե-
ցեալ Փոխանորդը, Պիոս Ժ., այդ խա-
ղաղութեան միմունջն ի բերան նահա-
տակ ինկաւ:

Բայց աշխարհ, կրքերով կատաղա-
ցած, ունկնդիր չեղաւ իր Առաջնորդին:

Եւ ցարդ հնձուեցան միլիոնաւոր ե-
րիտասարդ կեանքեր:

Ապա և իր անմիջական Յաջորդը,
Բենեդիկտոս Ժ. Բահանայապետ, մի-
եւնոյն աստուածատուր առաքելութեամբ
և աստուածապարգեւ Հեղինակութեամբ
Խաղաղութիւն զոչեց, և դեռ չի դադրիր
աննուէր եւ իր կորուստին դիմող մարդ-
կութիւնը հրաւիրելու Խաղաղութեան,

Կրօնքի, Աստուածապաշտութեան, միով
բանիւ, վերջին վախճանին:

Եւ նշանակելի խորտում մը սկսած է
ընդհանրապէս մարդկութեան մէջ դէպի
Վատիկան, դէպի Պաշտօնն Աստուծոյ,
դէպի Կրօնք, ուստի և յուսալի է նաեւ
դէպի խաղաղութիւն:

Տա՛յր երկինք որ միաբերան և յա-
մայր ամս կարենայինք հնչեցնել արձա-
գանգը՝ սերովբէական յաւերժապէս
քաղցրանուագ երկնային երգին:

Փա՛ռք ի բարձունս Աստուծոյ եւ
յետիտ խաղաղութիւն ի մարդիկ հա-
ճութիւն:

Ամենապատիւ Հոգեւոր Տիրոջ անուան
տարեգործին առթիւ, Պատրիարքական կղե-
ւանոցին աշակերտներուն կողմէ՝ Ն. Գերեր-
ջանկութեան ձօնուեցան հետեւեալ երկու
ուղերձները:

Ն Ո Ւ Ա Պ

Կիրնոսի ափը Սողոսի շունչին հետ
Ծծեցիր դու հոգւոց եռանդ երկնահոս:
Սերն Յիսուսի խրքան սուած քեզ յաւեօ,
Եղար վշաց վարժ Կիլիկիոյ դու Պօղոս:

Եկեղեցւոյ սուրբ իրաւանց վեհ գերեօ,
Աւա՛ղ, հիսկեւ կործանուելու վրայ եր հոս:
Անկիւնաքար վեհին յեցած՝ Հովնապետ
Պինդ բռնեցիր, եղար իրօք դու Պետրոս:

Պօղոս Պետրոս անոյ անուանք անբաժան,
Քեւ գրկախառն ջրին զահիդ ընդ փայլ, կեանք:
Քեզմով կրօնքի, կրօնքով անձիդ եւ վահան:

Այդ գոյգ անուանց կուռ իմաստք աննահ վանկ
Հրկեցեցուցիր Սիւնդի գործ ընդհանրան,
Որուն ընդ միջ թող կրկնուի արձագանգ:

Ամեն. Գերերջ. Հոգեւոր Տէր.

Որդիական անկեղծ սիրոյ, յարգանքի և
երախտագիտութեան զգացումները, որ եր-
կար ժամանակէ ի վեր խտացած էին մեր
սրտերուն մէջ, այսօր, Ձեր ցանկալի անուան
տարեգործին առթիւ, այլեւս չեն կրնար ամ-
փոփուած մնալ մեր կուրծքերուն տակ և
անդիմադրելիօրէն կը ձգտին պարզուելու սա
սրտագին արտայայտութեամբ, որ այսօր կ'ար-
ձագանգէ Հայ Կաթողիկէ Նուիրապետու-
թեան ամէն կողմերը:

Կեցցե՛ք Ամենապատիւ Պօղոս Պետրոս ԺԳ.
Թերզեան Կաթողիկոս-Պատրիարք Տանն Կիլիկիոյ,

Որ Սուրբ Պետրոս և Պօղոս Առաքեալնե-
րուն թէ՛ վեհ անուններով և թէ՛ վսեմ ա-
ռաքինութիւններով ձօնացած փառք և պար-
ծանք կը հանդիսանայ Սուրբ Լուսաւորչի
հոյակապ աթոռին:

Հոգեւոր Տէր, Ձեր բոլոր զաւակները
ուրախ գուարթ են այսօր, բայց մանաւանդ
մենք, որ երջանկութիւնը ունինք մօտէն
վայելելու Ձեր հայրական գութն ու գորովը:
Արտաքոյ կարգի առանձնաշնորհութեամբ մը
հաճեցաք նոյն իսկ ձեր բնակարանին մէջ
պատսպարան տալ մեզի, որ հեռացած մեր
հայրենիքէն, մեր ծնողքէն և ազգականներէն,
և, պարագաներուն բուն հարկին տակ, դուրս
ձգուած մեր ապաստանարանէն, ընազուրկ
թռչուններու պէս վտանգի մէջ կը գտնուէինք
նշաւակ ըլլալու եղանակին անհարթու-
թեանց և յեղյեղուկ քմայքներուն: Դուք,
Գերերջանիկ Հոգեւոր Տէր, գորովագութ հօր
մը պէս, կուրծք տուիք ամէն տեսակ գոհո-
ղութեանց, և փրկեցիք մեզ մեր դառն վիճա-
կէն: Դուք մեզի նկատմամբ եղաք բարերար
աջը՝ Նախախնամութեան որ կը կերակրէ
անցան, անհունձ և անշտեմարան թռչուն-
ները, որ կ'աճեցնէ դաշտի անհող, անշան
շուշանը և պայծառութիւն կու տայ անլոյս
լուսնակին: Վստահ եղէք, Ամենապատիւ
Հոգեւոր Տէր, որ մենք երբեք պիտի չմոռ-
նանք Ձեր այս անզուգական բարիքը, այլ
միշտ օրհնութեան մրմունջներ պիտի բար-
ձրացնենք դէպի երկինք և պիտի մաղթենք
որ Բարձրեալը պարգեւէ Ձեզի ուժ և կարո-

ղութիւն ի գլուխ հանելու մեր ազգին վերանորոգման արագան գործը որուն նուիրուած էք այնքան ատենէ ի վեր: Վստահ եղէք թէ մեր սիրտերը Ձեր խնամքներուն նորոհել շուշաններու պէս պիտի փթթին անբիժ, անարատ, և առաքինութեան անոյշ բոյրը ծաւալելով, գարնանային թարմութեամբ պիտի զուարթացնեն ձեր կեանքը: Ըմեռը, Վստահ եղէք, թէ մեր հոգիները, զոր կը ջանաք ճշմարիտ քահանայական ուսման առատութեամբը տոգորելու, լոյս պիտի տան, ապագային, մեր սիրելի հայրենիքին և պիտի վանեն անկէ ագիտութեան խաւարը, որ զայն պարուրելու կը ձգտի մանաւանդ այս վերջին ատենները:

Ահա ասոնք են, Ամենապատիւ Հոգեւոր Տէր, մեր արտին անկեղծ իղձերն ու զգացումները, հաճեցէ՛ք ընդունիլ զանոնք և օրհնել, որպէս զի արդիւնաւոր և պտղաբեր ըլլան:

“ ԱՆՈՐ ԱՍՏՂԸ ՏԵՍՆԵԼՈՎ ԵԿԱՆՔ ”

Պիտի ցուցնեմ անոր՝ քայց ոչ հիմաւ, պիտի երանեմ զայն, քայց ոչ մօտեւ: Կիտի ծագի Յակոբայ Աստղը և Բարայեղ մարդ մը երեւան պիտի գայ, որ Մովսրայ իշխանները պիտի յայրաւարեւ և աւար պիտի առնու Սեբայ անկն որդիները, և Անոր պիտի ըլլայ Եղոմ, որ իւր բշխանայն՝ Եսայի ժառանգութիւնն է. և Բարայեղ զօրութեամբ պիտի գործէ և Յակոբ մարդ մը երեւան պիտի գայ, որ ունի քաղաքի մնացորդներն ալ պիտի կորսնցնէ (Թիւք ԻԴ): Այս բառերով Քրիստոսէ 15 դար առաջ կը վերջացնէ իր մարգարէութիւնը Բաղամ, ամպարիշտ մօզը, որ հակառակ Բաղակայ՝ Մովսրացոց Թագաւորի ստիպումներուն՝ որ անխժէր զԻսրայէլ, Աստուծոյ ազդարարուած ըլլալով հարկադրեցաւ երեք անգամ օրհնել զայն: Ահա յորհնել առեալ եմ, օրհնեցից և ոչ դարձուցից: Օրհնելու ստիպուած եմ և չեմ կրնար ետ կենալ:

Որոգինէս կը կարծէ թէ Բաղամու երկրէն եղած ըլլան աւետարանական մօդերը, որոնք իրենց երկրի հնաւանդ ակնկալութիւ-

նը ունէին մարգարէացուած Աստղ և զայն տեսնելով է որ կը շտապեն դէպի Յակոբայ երկիրը՝ Հրէաստան՝ փնտռելու համար գուշակուած մեծ Վեհապետը: Ո՛ր է որ ծնաւ Արփայն Հրէից, Անոր աստղը տեսնելով եկանք: (Որոգ. Ծո. 13, ի գիրս Թուոց): Այսպէս Բաղամ Մոգերու աջքով տեսաւ 15 դար վերջը Յակոբայ Աստղը, որ Մեսիայի ծնած ըլլալուն ստոյգ նշաններէն մէկը պիտի ըլլար: Անոր համար ըսին՝ ծնաւ, և ոչ թէ ծնած պիտի ըլլայ կամ պիտի ծնանի:

Ս. Բարսեղ կը կարծէ բարեպաշտօրէն թէ այդ Աստղը Յիսուսի Քրիստոսի զոյգ անուններուն առաջին գրեւորվը ձեւացած ըլլայ: որովհետեւ յունարէն 1 և X գրերը եթէ ագուցուելու ըլլան, աստղ մը կը ներկայացնեն: Դուցէ Ս. Բարսեղ Կոստանդիանոսի երեւոյած հրաշալի նշանին վրայ գաղափարած ըլլայ աստղի այս ձեւը: Ի՞նչ ալ եղած ըլլայ այն, ստոյգը այս է որ այդ Աստղը սովորական չէր և եղածներէն տարբեր ըլլալու էր, այնպէս Մոգերը կրցան ըսել թէ Տեսնեմ Անոր Աստղը: այսինքն, կ'ըսէ Ալաբիտէ, այն Աստղը, որ ըստ Բաղամու գուշակութեան՝ Հրէից Թագաւորին՝ Մեսիայի յատկանիշը պիտի ըլլար: Ի՞նչ կրնար ըլլալ Քրիստոսի յատկանիշող ձեւը: Սա պիտի ըլլար ըստ, Բաղամու, յաղթող աշխարհակալ մը. ուրեմն այդ տիեզերական տիրողութեան մէկ ակնարկը գտնուելու էր Աստղ ձեւին մէջ: Այդ մանուկ Արքան, ըստ Եսայեայ մարգարէութեան՝ իր իշխանութիւնը իր ուսերուն վրայ պիտի առնէր. և իշխանութիւն իւր ի վերայ ուսոց իւրոց: Ո՛րն է Քրիստոսի իշխանութիւնը, զոր ինքն իր ուսերուն վրայ տարած ըլլայ: Խաչը, ահա ձեւ մըն ալ, որ կրնայ պատշաճիլ հրաշալի Աստղ: Եւ շատ իրաւամբ, վասն զի Քրիստոս ինչը իր նշանը անուանեց. Նշան Որդւոյ Մարդոյ. և անով է որ աշխարհը նախ պիտի գրաւէր և յետոյ պիտի դատէր: Յորժամ քարձաւացց, ձգեցից զամենեւին առ իս. երբ խաչի վրայ բարձրանալու ըլլամ բոլոր մարդիկը ինծի պիտի քայեմ, և ապա երեւեցի ճշան Որդւոյ մարդոյ յերկինս, և յայնժամ կոծեցիս ամենայն ազգի երկրի, և այ-

նուհետեւ պիտի տեսնուի Որդւոյ մարդոյ նշանը, զոր տեսնելով երկրի ամէն ազգերը պիտի կոծեն (Մատթ. ԻԴ. 30)։ Ասոր համար կարծես թէ Արեւելքէն եկած Մոգերու հարցումին թէ՛ Ո՛ւր է որ ծնաւ Արքայն Հրէից կը գտնենք Արեւմուտքի ներկայացուցիչ Հռոմէացի Պիղատոսը, որ հակառակ կուրացած Հրէից բողոքին՝ կ'արձանագրէ խաչին գլուխը Յիսուս Նագովրեցի քաղաւոր Հրէից։ Այսպէս Արեւելքի և Արեւմուտքի Հեթանոսները պիտի տեսնեն իւր արդարութիւնը և քաղաւորները իւր փառքի և քեզ պիտի կոչեն իւր անունով մը, զոր Տէր ինքը պիտի անուանէ (Ես. Լմ. 2)։

Հրաշալի՜ անտեսութիւն Աստուծոյ, քայց այս Աստղի անուամբ ա՛լ աւելի խորհրդաւոր կ'ըլլայ։ Ս. Օգոստինոս կը դիտէ որ Բրիտտոս ամէն ազգաց վրայ ունեցած տիրողութեամբը կու գար հաստատելու Աստուծոյ խոստումը առ Աբրահամ, թէ քաղմացուցից զգաւակ ինչպէս զասեղոս երկնից քաղմութեամբը։ Այրա՛ւամբ՝ Հօր հաւատոյ, սերունդը չէր կրնար երկրաւոր ըլլալ և ահա ինչո՛ւ համար աստղերու բազմութեան կը համեմատուի։ երկնային պիտի ըլլար անոր աշխարհակալութիւնը և Եւ այդ խոստացուած աշխարհակալութեան հաւատքը արթնցնելու համար է որ ամենաբարին Աստուծոյ, միշտ ներդաշնակ իր անտեսութեան մէջ, յարուորէր կը ծագէ նոր Աստղ մը։ Անոր Աստղը։

Բայց այդ Աստղը միայն Մոգերո՛ւ համար և այն ատեն միայն ու մէ՛կ անգամուան համար պիտի ծագէր։ Ո՛չ, մի անգամուան համար չէր, այն ցմիշտ վառուած էր այն լուսով զոր եկած էր վառելու Այն որ վկայեց իր անձին համար, թէ « Ես եմ յոյս աշխարհի (Յովհ. Ը. 12)։ Ես յոյս յաշխարհ եկի (Յովհ. ԺԲ. 46)։ Եւ անգամ մը որ վառեցաւ այդ աստղի ճրագը և շահեր ըրաւ առաքեալները՝ Դոմէ Կի՛ յոյս աշխարհի, զրկեց զանոնք երթալու շինելու այն աստղակամար քաղաքը որ Վիսին։ Պետրոսի հիման վրայ պիտի կառուցուէր՝ բարձրաւանդակ ամէնուն տեսանելի շէրան մը վրայ։ Չի կրնար ծածկուած մնալ քաղաքը որ շէրան վրայ կանգնած է, ինչպէս չեն վառեր հրագը գրուանի տակ

դնելու համար, հասկա կը գետնէն աշտանակի վրայ՝ որ տան մէջ եղողներուն ամենուն աչքոյս տայ, այսպէս ձեր յոյսը պիտի յուսաւորէ մարդոց առջեւ (Մատթ. Ե. 14. 16)։ Այդ լուսով ցկատարած աշխարհի վառ պիտի մնայ Լոյսն ճշմարիտ։ որ աշխարհ գալիք ամէն մարդիկ պիտի լուսաւորէ (Յովհ. Ա. 9)։ Կաթողիկէ հաւատքն է այդ։ Անոր Աստղը։

Աւարտին կը դիտէ որ Բաղաւառու գուշակութեան մէջ մասնաւորապէս կ'աւանդուի քաղաք մը, զոր Իսրայելէ երեւան գալիք Մարդը, Որդին մարդոյ, պիտի գրաւէր՝ անոր մնացորդներն ալ խորտակելով։ Դրն է այդ քաղաքը։ Հեթանոս Հռոմէն է, կ'ըսէ։ որ պերագանցօրէն Քաղաք ըսուած էր։ Urbs։ Բրիտտոս գրաւեց այդ քաղաքը, հոն դնելով զվէմն հաւատոյ, հիման Ս. Եկեղեցւոյ, և այն տեղէն Աշտանակի վրայ դրուած ճրագի պէս վառեցաւ անմոռար վատրապետքեան լոյսը, որ անշիջանելի պիտի մնայ մինչեւ աշխարհի վերջը, հակառակ խաւարի բնականայրին՝ դժոխքի յարուցանելիք մութ մրկին։ Իրաւ է թէ այդ Աստղն ալ շատ մը Հերովդէաներու ապարանքներուն, յամառ զպիւրներու ժողովներուն և ապերախտ Երուսաղէմներու մօտեցածին պէս կը ծածկէ իր դէմքը, (ահաւոր պատիժ)։ սակայն ամէն անոնց, որ անկեղծաւոր հաւատքով կը փնտռեն զինքը հարցնելով ո՛ւր է որ ծնաւ, չուշանար, տեսանելի կ'ըլլայ և կ'առաջնորդէ անոնց։ Եւ ահա Աստղն զոր տեսին յԱրեւելս առաջնորդեաց անոնց, մինչեւ տանի հասցնէ հետեւողները հոն ուր եր մանուկն, ի Կաթողիկէ, Սոաքեւական Ս. Եկեղեցին։ վառ զի հոն է այդ աստուածային մանուկ թագաւորը, ուր է իր Թագաւորանիստ քաղաքը, Եկեղեցին, և Եկեղեցին հոն է՝ ուր է Պետրոս Երանի՛ անոնց որ կրնան ծնունդը և Աստուածայայտնութիւնը իրարու բարեմաղթել ըսելով։ Անոր Աստղը տեսնելով եկանք։

Ն.

ՀԻՆ ԿԱԽԵՐԱԹՈՒՂԹԵՐ

Օ Ր Ա Պ Ի Ր

ՄԵԾ ՀԱԼԱԾԱՆՔԻՆ

ՈՐ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԼԻ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵՒՑ ԴԷՄ
1829 Յ ՅՈՒՆՈՒՄԱՐԻ ՄԷՅ

(Շար.)

Սեպտ. 2. — Օսմանցիի տէրութեան մու-
րախտասները որ էտիրնէ Մօսքօֆի օրտու-
ն գացին, եղած թէքլիֆներուն թուղթը դմբե-
ցին որ եղաւ պարըշ:

Իհթիսապ աղասին մարդիկները մէյ մէկ
տեղ աքսորուեցան և զինքը մինակ Պալը-
քէսրէ աքսորեց Տէրութիւնը և մալն ալ ի-
նամ եղաւ իրեն:

Նազանճի օղլու Ստեփանին պատճառաւ
զին (Խի, իւրեֆ) գացող հրեաները Պէզ-
ճեանը զիէն հանել տուաւ:

Հալածանքի սկիզբէն մինչեւ ցայսօր Հա-
յոց պատահած բաները որք են:

1. Պէշիկթաշի Հայոց ժամին միւթէվէլ-
ին Թիրեաքի ոտաքին աղբօրը փեսան, հա-
սարակին մէջը աբանսըզ մեռաւ, աս մարդս
քաթօլիկի ֆամիլեա մը աքսորել տուած էր:

2. Հաճի Տատ օղլու Սիմօնին կինը գի-
շեր մը իր տունը միսաֆիրներով նստած ա-
տեն, քաթօլիկի վրայ խօսք էր կը բացուի,
աս կինը կ'ըսէ. «Աման սա քաթօլիկներուն
հախէն պանք ինչ որ երթայ նէ երթայ, ա-
մէն մայս աս բանին համար կը խարճեմ, աս
բանս առաջ երթալու համար», և ասոր նման
խօսքեր: Երկրորդ օրը իրիկուն գէմ աս
կիւան դաւակը Պարութխանան ըլլալով իր
գործը, այլազգին մէկը աս տղուն վրայ ոխ
ունի եղեր, ժամանակը գտնալով նետիչով
կը վարնէ զասի. նետիչ մըն ալ պարութ-
խանային մէջը կը նետէ, ան կէտին բռնկե-
ցաւ. տղուն ալ փողջիլինի քար մը կ'իյնայ
վրան կը մեռնի. պարութխանան երկինքը
ելաւ ու չորս հինգ հարիւր մարդ ալ մեռաւ:
Ասոր հայրը պարութճի պաշի Սիմօն ըլլալով
չատ վախցաւ, բայց հայք աղատեցին ինչ-
պէս անդին պատմեցի. յետոյ մեռնողին մայ-

րը մեռելին զուար անցաւ նահատակ կան-
չեց:

3. Օրթագեղցի թէրզի Սիմօնը գիշեր մը
պինովցած տէրէն անցնելինի ձմեռուան ժա-
մանակ ըլլալով ջուր կ'անցնէր, ինկաւ ջու-
րին մէջը, խղթվելինի հանեցին ջրէն. հինգ
վեց օրէն վերջը մեռաւ. աս մարդս խամա-
զութիւն կ'ընէ եղեր:

4. Էքմէքճի Մարտիրոսը Պէյ օղլու ժա-
մէն առնուած աներուն մէկը կրուեցաւ. քա-
նի մը օրէն վերջը ասոր դաւակը հորը ինկաւ
մարդ ինջեցուցին և չուանով վեր հանելի-
նի չվանը փրթաւ, կրկին ինկաւ և մեռաւ:

5. Մարապետները աքսորելու համար զա-
նոնք բաթրիքիսանէին քովը տան մը մէջ
ժողվեցին, հոն հայու կին մը իրենց կը հայ-
հոյէ, լախըրտըն բերանն իքէն անխտէ կ'իյնայ
թեւը կը կոտորի:

6. Երէկ մարդ մը քաթօլիկ մը խամդե-
լու համար պատրիարքարանը երթալինի
ճամբան կ'իյնայ, ոտքը կը կոտորի:

7. Աշնան օղլու սարաֆ Մկրտիչը շախա
մէկ սուս խօսքով վախցաւ լեզին փրթաւ,
սինիրները քաշվելով շատ օր հողին չի կըր-
ցաւ տալ, յետոյ մեռաւ:

8. Պէյօղլու Յապի անունով աթթէրէ մը
քաթօլիք մը խանվէ կ'ուզէ առնել. ասիկա
կը պատասխանէ. Ես քաթօլիկի խանվէ չեմ
ծախեր: Միջոցը հինգ վեց օր անցաւ արան-
սըզ մեռաւ և խանվէն ուզողը քիւրքճիւ լազ
Կոմիտասն էր:

9. Աս հալածանքի պատճառաւ Ճիւմպիւշ
օղլուն հայոց ժամը գացեր էր, հալա վուր-
դունիով մեռաւ. մեռած ժամանակը ուղղա-
փառի քահանայ ուզեց, բայց մինչեւ եկաւ
նէ զալալլըն մեռաւ:

10. Նաթթան փաշայը Յարութիւնին տը-
ղան կրօնափոխ եղաւ, յետոյ քիչ օրէն մե-
ռաւ:

11. Կէլիպօլցի տէրտէրին մէկը Զիւլ օղ-
լուն աղջիկը պիւլիւլէմիշ ըրեր է. աս կնիկն
ալ մէրաքլանմիշ ըլլալով երկու դաւակը գի-
շեր ատեն հորը նետեր է. և զինքն ալ յե-
տոյ նետեր պիտոր, իմացեր են անէն թող
չեն տուեր:

12. Թիւլպէնտճի Ազարիա օղլու բացը ելաւ :

13. Հայոցմէ ստաթճի մը կրօնաւորն եղաւ :

14. Հայոցմէ երեք կնիկ երեք զաւակով կրօնաւորն եղան :

15. Պէյօղլու ծախուած քաթօլիկի տուն մը այլակրօն մը առաւ , քիչ օրուան մէջ ութը զաւակը կտեւէ ետեւ մեռան :

16. Մանաս Գրիգորի տունը այլակրօնի առնել տուողը , անանկ ըսին որ չէքէրճի Նաթալէն պատճառ եղած ըլլայ որ յետոյ նոյն տունը վարձքով նստաւ : Ինչ օրուան մէջ հիւընդցաւ , քիթը , բերանը չարբըմըջ եղաւ , հիւանդութեան ժամանակ ըսին թէ վասիլէթ ըրաւ որ ես աս տունը ծախուելուն պատճառ եղայ , Աստուած ալ զիս պատժեց , չըլլայ որ ուրիշները ասանկ բանի ձեռք զարնեն , և յետոյ մեռաւ :

17. Թընկեր Յակոբ աղային աղան Միքայէլիկը հայոց կողմը անցնելով , Պալթա իւմանի եղած իրենց տանը հալիպէն Հայոց նոր շինուած Աստուածածնայ ժամը ընծայ խաւրեց , Հայք ալ օրթա ժամի ղուպպէյէն վար կախեցին , քիչ օրէն ինկաւ վար կտոր կտոր եղաւ , էյէր ժամու վախիթ ըլլար նէ շատ մարդ կը սախտըվէր :

18. Խօտիկ օղլու Յովհաննէսը հայու ժամը երթալիս ինկաւ սօխախը , երեսը , քիթը , բերանը զէտէլէնմիշ ըլլալով , արունով պուլանմիշ եղաւ , յետոյ խօթուելը մարդ մտնալով տունը տարին :

19. Բէք շատը քաթօլիկ հայոց ժամը գացին տուներնին չի ծախվի տէյի , ամէնունն ալ ծախուեցաւ :

20. Հայ մէկ էքմէքճի վարպետ խայմախամ փաշան կախել տուաւ պակաս ծախելուն համար հացը :

21. 1828 Հոկտեմբեր 31 Զորեքչաքթի օրը Զամիչ օղլու Աբրահամ մեռաւ , ասի Հայոց ժամը գացեր էր , մինչեւ քահանայ հասաւ նէ մեռաւ :

22. Ղարազըը հայ սարրաֆ Գրիգորը Պէյ օղլու քեարկիր տուն մը ունէր , գիշեր ատեն սերիթ հով մը փչեց , պաղչայի կողմը փլաւ , սօխախի կողմի պատերը ճաթեցուց :

23. Ինչպէս որ անդին ըսի , Սէլիմ Մէհմէտ փաշան հալածանքի ժամանակ էր եպարքոս , և ասոր ձեռօքը հայք շատ բաներ ըրին , մուշտակի տէրութեան հետ պատերազմ ունենալով , ասի օրտուն առաւ պատերազմ գնաց քիչ ժամանակի մէջ աղը ըրին Կէլիպօլու աքսորեցին կէօղ հափսիպէս : և իր ստակ բռնողը աղա Պօղոսը ըլլալով եպարքոսին ապրանքը վնտոելու համար տէրութիւնը գասի Պաշախուլին հապս ընել տուաւ և ամիսի չափ պառկեցաւ հոն , յետոյ անանկ լսուեցաւ քի աղա Պօղոսը տէրութեան հազար քէսէ ստակ տալով ազատեր է ու բաշային ապրանքէն էլ մնալ տէրութիւնը առաւ : ասանկով հիմակուհիմա ազատեցան : հայք աս բանիս շատ աշխատեցան քի ազատին վէրէ իրենց բանին ասանկ կը յարմարէր , յետոյ ժամանակ անցաւ , կրկին թուղերը տուաւ տէրութիւնը Պէզճեանին բարեխօսութեամբ :

24. Խուլուսճի պաշի էրամը առաջին անգամ հայոց ժամը գնաց , միջոցը քիչ անցաւ ասոր պղտի աղան երեսուն քէսէյի մալէն ու ստակ ալ էւել առաւ ճերմակ ծով փախաւ :

25. Բանօս օղլու Թիւլպէնտճի Սնտոնը Օրթագեղ Եէնի մահալլէն տուն ունի . օր մը թախըմ մը հայու տղաք ասոր տանը առջեւ ճէվիզ խաղալիս ուղղափառի տղայ մըն ալ մէջերնին կայ եղեր , Բանոսին կինն ալ բէն-ճէրէյէն նայելիս , հայու տղաք մէկ մարազայով մը աս ուղղափառ տղան սկսեր են ծեծել քաթօլիկ է ըսելով , աս կինն ալ ուղղափառաց դահիճ ըլլալով վերէն պօռալով ըսեր է հայու տղոց . Զարկէ՛ք քաթօլիկ շունին , զարկէ՛ք քի դառնայ : Ուղղափառ տղան կնկան նայելով կ'ըսէ . Ինծի զարնել կու տաս կոր դու քաթօլիկ է տէյի , բայց զիտցիր որ Աստուած ալ քեզի պիտի զարնէ : Միջոցը երեք օր անցաւ աս կինը ինչ կ'ըլլամ կոր ըսելով մեռաւ , աս բանս տմէն մարդ իմացաւ :

26. Խանտիլի Տաղ տէվրէն օղլուն թուր հայ , մէկ այլակրօն մը առաւ ու իր տնէն ալ շատ ապրանքով փախաւ :

27. Օրթագեղ Եէնի մահալլէ քաթօլիկ

էպէ կնիկ մը հայոց ժամը գնաց ու խոստովանանք եղաւ, մեռած ժամանակը կրկին տէրտէրի խոստովանանք եղաւ և ունեցած ստակն ալ հայոց ժամին տուաւ իր հոգւոյն համար, հոգին տալու ժամանակ՝ սատանաները քովէս վռնտեցէք ըսելով, կանչվուտելով մեռաւ:

Սեպտեմբեր.— Աս ամսուս մէջ շատ անգամ ցորեկը ու գիշեր ատեն շատ գէլգէլէ եղաւ, թեթեւ ու խիստ:

(Շարունակելի)

Ս. ՅԱԿՈԲ ՄԾԲՆԱՅ ՀԱՅՐԱՊԵՏ

Ս. Յակոբ երբ Արտամիտ գիւղին մօտեցաւ, ճամբուն վրայ աղբիւր մը տեսաւ, ուր աղջիկներ և կիներ լուացք կ'ընէին: Աստիք սուրբէն չակնածեցան, զանիկայ արհամարհեցին ու ոմանք ալ ծաղրեցին: Այն ատեն Սուրբը տապանին խաչածեւ մասունքը ձեռքը բռնած՝ անէծք կարդաց. և աղբիւրը մէկէն ցամքեցաւ, ու աղջիկներուն մազերը բոլորովին սպիտակեցան: Աս որ տեսան, ամէնքը Սուրբին ոտքը ինկան և սկսան աղաչել: Սուրբը խաչին սուրբ նշանով աղբիւրը նորէն բխեցուց. բայց աղջիկներուն մազերուն սպիտակութիւնը չանցուց ի յիշատակ անոնց մեղքին:

Ս. Յակոբ Մծբին հասնելով, Սուրբ Մարութի տուաւ տապանին խաչածեւ մասունքը, զոր անիկա մեծ ուրախութեամբ առաւ, աչքերուն վրայ դրաւ, համբուրեց. շնորհակալ եղաւ Աստուծոյ այս մեծ շնորհքին համար. և օրհնեց Ս. Յակոբը որ իր փափաքը կատարելու համար այնքան աշխատութիւն յանձն առաւ:

Մատնիչ մը գնաց Պարսից Շապուհ թագաւորը գրգռեց Մծբնի բնակիչներուն դէմ ըսելով թէ Հռովմայեցիներուն կողմը կը բրնեն, և միանգամայն ո'չ զօրք ունին ո'չ զօրավար: Շապուհ իր զօրքը առնելով եկաւ պաշարեց իսկոյն նոյն քաղաքը և Միւգտոն գետին ջուրը քաղքին շուրջը դարձնելով, այնքան սասանեցուց անոր պարիսպները,

որ տեղ տեղ տապալուելու վրայ էին: Քաղաքապահ զօրքերը այս վերահաս ահեղ վտանգը տեսնելով, Ս. Յակոբայ ոտքը ինկան և լալով խնդրեցին որ իրենց օգնութեան հասնի: Սուրբը զթաց անոնց վրայ, առաւ տապանափայտ Սուրբ խաչը. պարսպին վրայ ելաւ, դարձաւ դէպի թշնամի բանակը և դէմքին վրայ բռնելով սուրբ նշանը՝ սկսաւ արտասուել և լռիկ մնջիկ, եռանդալին խնդրել Աստուծոյ որ քաղաքը փրկէ: Քաղքին ամբողջ բնակիչները արհաւիրքի մատնուած՝ աղիողորմ կու լային և կ'աղօթէին: Եւ ահա մեծ հրաշք մը կ'երեւէր Պարսից թագաւորին որ զՍուրբը հեռուէն կը տեսնէր իբրեւ բազմաթիւ ձիաւորներէ շրջապատուած ահեղ թագաւոր մը: Շապուհ կ'ահաբեկի և կ'անչելով այն մասնիչը որ իր արշաւանքին պատճառ եղած էր, կ'ըսէ. Դուն ինչո՞ւ համար զիս խաբեցիր ըսելով թե՛ Հոն զօրք չկայ, զօրավար չկայ: Ահա ես այս օրը կը օգնեմ քաղաքը մը եւ անոր շուրջը տառապանաւ հազար հեծեալ: Դուն զիս մեղցնել ուզեցիր, ես հիմա մեղցնել պիտի տամ քեզ: Եւ մէկէն հրամայեց որ բոլոր զօրքին առջեւ գլխատեն նոյն մատնիչը: Հրամանը իսկոյն գործադրուեցաւ: Ասոր վրայ Պարսից բանակին մէջ մեծ շփոթութիւն մը ինկաւ: Սուրբը իմացաւ Աստուծոյ գործած հրաշքը և որպէս զի չըլլայ թէ թշնամիները հալածելու ատեն ընդհարումներ տեղի ունենան և երկու կողմէն կեանքեր զոհուին, խնդրեց Աստուծոյ որ թշնամի բանակին վրայ խայթող միջատներ զրկէ: Եւ իսկոյն թանձր հողմավար ամպի պէս թշնամեաց վրայ ինկան անթիւ անհամար պիծակներ, բոռեր, գոռեխներ և մեղուններ, և այնպէս չարաչար հարուածեցին զանոնք որ ամէնքը կորակոր դարձան իրենց երկիրը: Քաղաքացիք փառք տուին Աստուծոյ այս մեծ հրաշքին համար, այնուհետեւ սկսան արտաքոյ կարգի մեծաբանքով յարգել պատուել Սուրբ Յակոբը:

Անգամ մը Սուրբը Պարսից մէկ քաղքին մէջ տեսաւ որ դատաւոր մը անիրաւ դատաստան կը կտրէ: Զանիկայ յանդիմանելու համար անիծեց անոր զիմացի քարը, որ յանկարծ ինկաւ փսոր փսոր եղաւ, և ամէ-

նուն վրայ ահ ու սառսափ ձգեց. դատաւորը աս որ տեսաւ, դատաստանը ուղղեց:

Մծբնայ եպիսկոպոսին վախճանելէն յետոյ, քաղաքացիք նոր եպիսկոպոսի մը ընտրութեան մասին միաբանիլ չկրնալով, Սուրբ Մարութէ ճգնաւորին դիմեցին, ան ալ խորհուրդ տուաւ իրենց որ Անտիոքայ պատրիարքին երթան, և Սուրբ Հոգին անոր եպիսկոպոսական ժողովին միջոցաւ պիտի յայտնէ ընտրութիւնք անձը: Մծբնցիք հետեւեցան Սուրբին խորհուրդին և պատգամաւորներ զրկեցին պատրիարքին: Աստուած հրաշալի տեսիլքով մը հրամայեց պատրիարքին որ միայնակեաց Յակոբը եպիսկոպոս ընտրէ: Պատրիարքը այս տեսիլքը պատմեց եպիսկոպոսներուն և անոնց հետ Մծբին երթալով նոյն քաղքին եպիսկոպոս ձեռնադրեց Ս. Յակոբը: Բաղքին մէջ մեծ ուրախութիւն եղաւ այս առթիւ. որովհետեւ ամէնքը կը ճանչնային Սուրբը որ առաջ արդէն այն տեղ եօթը տարի սարկաւապութիւն և մի քանի տարի ալ քահանայութիւն ըրած էր:

Սուրբ Մարութէ կիրակի օր մը քանի մը ընկերներով Մծբին եկաւ Ս. Յակոբը ողջունելու և անոր օրհնութիւնը առնելու: Ս. Յակոբ և Ս. Մարութէ եկեղեցիէն ելլելու ատենին, գաւթին մէջ անդամալոյծ մը տեսան և Աստուծոյ անոր բժշկութիւնը խնդրելէ յետոյ ձեռքէն բռնեցին կանգնեցին և հրամայեցին որ քալէ: Անդամալոյծը մէկէն բժշկուեցաւ և ուրախութեամբ սկսաւ զԱստուծոյ օրհնել:

„ԱՍՏՈՒԾՈՅ ԱՐՔԱՅՈՒԹԻՒՆԸ“

ԱԻՅՏԱՐԱՆՆԵՐՈՒ ՄԷՋ

Հեղինակաւորու I. Շ.ի

(Շար. եւ վերջ)

Ասի կ'առաջնորդէ մեզ զէպի այն հարցը, որ արդի քննադատութեան համար զլիսաւոր հարցը կը կազմէ: Ի՞նչ առնչութիւն կը հաստատէ Փրկիչը Աստուծոյ արքայութեան մէջ

ներկային ու ապագային, երկնային Բաւիշիայի սկսուած երեւոյթին ու կատարուած երեւոյթին միջեւ:

Ամէն ոք զիտէ թէ դերման, անգլիացի ու ֆրանսացի բողոքական դպրոցներու մէջ ինչպիսի վարկածի գիմում կ'ընեն հաճոյքով՝ պարզարանելու համար Աւետարանի այն անցքերը ուր Փրկիչը կարծես իբր մօտալուտ կը ներկայացնէ իր վերջնական գալուստը: Ըստ իրենց՝ այդ անցքերը խօսելու ձեւեր մը ըլլալու են, զորս աւետարանիչք աւելի կամ նուազ գիտակցօրէն ազաւաղած են, չըսելու համար թէ զլիսովին խաթարած ալ են: Նման քննադատականի մը չի կրնար ռեւէ կաթողիկէ հեղինակ մը համակամ դառնալ: Արդէն Ս. Հարք և Ս. Գրոց ականաւոր մեկնիչները այս հարցը տարբեր կերպով մը լուծած էին: Զի կրնար ըսուիլ թէ անոնք ալ նշմարած չէին այդ անցքերուն դժուարութիւնները, բայց իրենք զանոնք ըմբռնած ու մեկնած էին էն քառաջ իբր մարգարէական անցքեր մը — հետեւաբար այնպիսի անցքեր, ուր պէտք չկար ճշգրիտ ժամանակագրական կարգ մը նշմարել նկատի առնուած տարրեր զէպքերուն միջեւ, մանաւանդ երբ այդ զէպքերէն մին միւսին պատկերն ու երաշխաւորութիւնն ըլլալ սահմանուած էր:

Ահա ես ալ այս լուծման յանգած եմ իմ այս գրութեանս մէջ:

Անշուշտ չեմ կարծեր թէ ինքզինքս խաբած ըլլամ տակաւին չլուծուած դժուարութեանց ու մութ կէտերու մասին: Բայց նոյն իսկ կաթողիկէ հեղինակներու քով անգամ ես չկրցայ գտնել բացատրութիւն մը՝ որ ըստ իս նոյն աստիճանի փրկած ըլլայ թէ՛ ներշնչուած անցքերը եւ թէ՛ աւանդական մեկնութեան հիմնակէտերը:

Ամենեւին անստոյգ է ժաւը (փորուսի). բայց չէ՞ որ ճիշդ այս պատճառաւ ալ Տէրը կ'ըսէր. Հսկեցի՛ք, զի ո՛չ օրը զիտէք, ո՛չ ժաւը:

Բաւիշիա բոլ Թեոն (Արքայութիւնն Աստուծոյ) երկրի վրայ հիմնուելով և յաւիտեանականութեան փառաւորութեանց մէջ իր կատարելութեան հասնելու սահմանուած ըլլալով, մեզի կ'երեւի իբր Աստուծոյ մէկ

մեծ միջնորդութիւնը երկրի վրայ. զի Մէսիան որ զայն կը քարոզէ ու կը հիմնէ իր արիւնով — նոր դաշանց արիւնովը — նոյն ինքն Քրիստոս, կենդանի Աստուծոյ Որդին է. եթէ ուրեմն հոս ճշդել պէտք ըլլար իմ եզրակացութիւններս, այժմէն պիտի ըսէի թէ Բապիլիան, Քրիստոսի արեամբ հիմնուած, իրապէս մարդարէններէ աւետուած մեսիական փրկութեան նոր դարաշրջանն է. այն դարաշրջանը՝ յորում երկնաւոր Հայրը կը Թագաւորէ Քրիստոսով կարգաւորեալ աշակերտաց վրայ նուիրապետութեամբ ճոխացած արքայութեան մը մէջ, արքայութիւն մը՝ որ հետզհետէ միշտ աւելի կը զարգանայ մինչեւ որ հասնի վերջնական կատարածը: Այն առտեան պիտի ըլլայ վերջնական փրկութեան ու սրբոց յալլթանակլին ժամը: Աւետարաններուն մէջ «Արքայութիւն Աստուծոյ, Արքայութիւն երկնից» բացատրութիւնները անխտրաբար կը դործածուին մերթ նշանակելու համար մեսիական փրկութեան այս դարաշրջանի սկսուած ժամանակամիջոցը և եկեղեցին՝ որ անոր անձնաւորումն է, և մերթ ցոյց տալու համար ասոր ապագայ ժամանակամիջոցը: Նոյն իսկ շատ անգամ ալ ընդհանուր փրկագործութեան խորհուրդը կը պարփակէ ան: Այս միեւնոյն իմաստներով է որ կը տեսնենք թէ ան կիրարկուած է Նոր Կտակարանի մէջ: Իրաւամբ ուրեմն Ս. Օգոստինոս Ս. Յովհաննու վրայ գրած ճառին մէջ կը զանազանէր կրկին երեւոյթները Բապիլիա թու Թեոփիան ինչ որ երկրի վրայ կը կազմէր արդէն տուն Աստուծոյ, տաճար Աստուծոյ... եւ արքայութիւն երկնից, կը գրէր. Արդեւ իսկ արքայութիւն կը կոչուի, քայց դեռ նոր կը կառուցուի... դեռ նոր կը հաւաքուի, այնպէս որ դեռ չի թագաւորեր այս արքայութիւնը: Բայց Հիւպոթիայի մեծ Վարդապետը կը յաւելուր իսկոյն. Ուսի այնպիսի է արդեւ արքայութիւնը, որ եթէ արքայոջ զայրակողութիւնները վերցուն անկէ՝ այն ասեւ պիտի հասնի արքայութեան. այնպէս որ ոչ միայն արքայութեան անունը կրէ՝ այլ նաեւ իշխանութիւն ունենայ թագաւորելու: Եւ անս այս արքայութեան աջ կողմը նստողին ի վերջոյ պիտի ըսուի. «Եկայք օրհ-

նեալք Հօր իմոյ, ժառանգեցէք զպատրաստեալ ձեզ արքայութիւնն» (Մատթ. ԻԵ. 34), այսինքն թէ դուք որ արքայութիւն երկնից թագաւորեալ, եկեք, թագաւորեցեք, որպէս զի ինչ որ յուսով ունեիք, նոյնը իրապէս վայելեալ:

ՄԵԼԵՒՍԵԼՔ

ՁԻՆՈՒՈՐԻՆ ԽԱՉՈՒՂԻՆ. — Ժան Լազուր՝ սահմանապահ դորագունդի մը հետեւակ զինուորներէն էր:

Արտաքին երեւոյթը շատ տարօրինակ էր. քիթը ցոռկի պէս դուրս ցցուած, չրթունքները՝ թանձր և երկայն, գլուխը՝ կոնածակ, մազերը՝ ոսկեգոյն, նորածագ արեւումը պէս պսպղուն:

Առաջին անգամ որ բանակը մտաւ, տասնապետը դռնէն. «Բա՛րեկամ, կ'երեւի թէ Աստուած քեզ ստեղծելու օրը քիչ մը ծիծաղիլ ուզած է»:

— Հաւատա՛, աղաղակեց համալսարանական մը, դժուարութիւն կը զգայի հաւատալու թէ մարդը կապիկէն կը սերի. հիմա գրեթէ կը հաւատամ: Պրանսական բանակին պատուին համար, ասանկներուն մէկէն ճամբայ տալու է:

— Ընդհակառակն, առաջապահներու կարգը դնելու է. Բրուսիայցիները այս որ տեսնեն իսկոյն կծիկը կը դնեն, կը փախչին»:

Լազուր այս ամէնը կը լսէր լռիկ մեջիկ, գլուխը ծռած, բոռնցքը գրպանին մէջ սեղմած: Ի՞նչ կրնար ըսել: Լաւագոյն էր համբերել անոնց չարամտութեան: Բայց ամենէն աւելի զգածուեցաւ իր զօրապետին կողմէ գտած ընդունելութենէն: Այս պաշտօնեան մանրազնիւն քննութեամբ աչքէ կ'անցընէր իր զինուորները որ կարգաւ շարուած էին: Լազուրին առջեւն որ հասաւ, կանգ առաւ, աչքերը վրան սեւեռեց, աղէկ մը զննելէն յետոյ ուղղեց անոր սա գովեստը. «Տղա՛ս, հիշըր ըսելով այնչափ աղուոր չես»:

Բայց այս քիչ մը արտառոց զրսերեւոյթի տակ ի՞նչ գեղեցիկ հոգի. «Աղամանդ մը անպիտան պատեանի մը մէջ», ինչպէս սովոր

էր ըսել իւր տասնապետը: Նկարագիրը քիչ մը տարօրինակ էր արդարեւ, բայց պարզ, համարձակ, ազնիւ, աղքատասէր, անյիշատիչ, չարքաշ, և մօր մը պէս գորովոտ: Տասնեւհինգ օր չանցած ամէնուն սիրելի եղաւ:

Լազուր չաղփաղփելէ շատ կ'ախորժէր. բարեկամներու հետ խօսիլը շատ հաճելի էր իրեն: Երբ խօսակից չունենար, ինքն իրեն կը խօսէր, մահիճը շտկելու, պարկը մաքրելու, հրացանը յղկելու ժամանակ... Բայց ի՞նչ բանի վրայ կը խօսէր: Ահ քիչ մը ամէն բանի վրայ: Ընկերները իրեն խօսքերը լսելու համար կը պահուէրէին, յետոյ յարմար վայրկեանին գլխուն բան մը կ'իջեցնէին: Բայց ամէն պատիժ, խրատ անօգուտ էր. մեր մարդը միշտ կը չաղակրատէր:

Լազուր իր ժողովրդապետէն բանակին քահանային ուղղուած յանձնարարական թուղթ մը առած էր: Կարելի՞ է հաւատալ. ասանդինք օր թուղթը քովը պահեց: Կը վախնար որ չըլլայ թէ քահանան ալ'նուաւ տացուցիչ ընդունելութիւն մը ընէ իրեն: Սակայն օր մը սիրտ կ'ընէ կ'ելլէ կ'երթայ մինչեւ Ակումբը և նոյն քահանային կը ներկայանայ:

— Ճարով եկար, հազար բարով, կ'ըսէ քահանան, դուն շատ ազնիւ ես. այսուհետեւ մերիններէն պիտի ըլլաս, հիմայ քեզ կը ծանօթացնեմ... հոս քու տանդ մէջ ես... հոս կը խաղան, կը խօսին, կը կարդան, կ'երգեն, կ'աղօթեն. կը զբօսնուն, հոս պիտի գտնես ինչ որ քեզի օգտակար է...»:

Այն օրէն, երէցը և Լազուր ընկերական սիրով իրարու կապուեցան, և Լազուր կաթողիկեայ Ակումբին ամենէն գործօն և ամենէն հաւատարիմ անդամն եղաւ:

Ք. Վարդապետը զինուորները կը սիրէր. իր բոլոր ազատ ժամերը անոնց կը նուիրէր: Երեւնալուն պէս իր «սիրելի զինուորները» քովը կը վազէին, և երբ իրենց կը քարոզէր, կիրակի իրիկունը, գրեթէ անյապ տենչով մը միտ կը դնէին իրեն: Հայհոյութիւնը, մոլութիւնը ատելի ընկու և մեր Տէրը և բանակներու Աստուածամայրը սիրցնելու գաղտնիքը ունէր...:

Զինուորները իրենց յատուկ Կուսմօր արձանը ունէին, և կազմած էին աւագ եղբայրութիւն մը, որուն մէջ քաղաքային անձեր չէին ընդունիր:

Արդ օր մը Չարչարանաց վրայ քարոզելու ատեն, Յիսուսի մեզի նկատմամբ ունեցած անհուն անսահման սէրը ցոյց տալէ յետոյ իվեր հանեց անհուն ապերախտութիւնը այն մարդոց որ կը հայհոյեն, կիրակի օրը սուրբ չեն պահեր, և չեն ուզեր Փրկչին վրայ մտածել: «Աղուոր խաչելութիւններ կը տեսնեն, բայց չեն կարեկցիր: Դեղեցիկ խաչուղիներ ունինք, բայց առջեւէն կ'անցնին առանց նայելու... Ի՞նչ ապերախտութիւն»:

Այս վերջին խօսքերը ինկան Լազուրի հոգւոյն վրայ ինչպէս հղճնա մը պարարտ հողի վրայ: «Շատ շիտակ է այս ամէնը: Ես խեղճ ողորմելիին մէկն եմ, պէտք է որ խաչուղիի աղօթքը զուրցեմ»: Դժուարութիւն մը կար սակայն. գիրք չունէր, ասկէ զատ, մոլթը չկոխած եկեղեցի գալու էր: Այս մասին քահանային հետ կը խօսի. «Եթէ կ'ուզես գիրք մը կու տամ. կ'ըսէ քահանան, բայց կարեւոր չէ: Բաւական է որ կայանները դիտես և ըրպէ մը խորհիս ինչ որ Յիսուս կը կրէ, և ա'յն՝ քու մեղքերուդ համար, ահա այս է բոլորը»:

— «Հասկցայ. ան ատեն աւելի լաւ կը համարիմ առանց գրքի ընել»:

Ատեն մը անցնելէն յետոյ, նոյն ժողովրդապետութեան փոխանորդը, Ք. Վարդապետին դուռը կը զարնէ. — «Ըսէք կը խնդրեմ, ձեր զինուորը... անունը չեմ գիտեր, բայց գլուխը եղական, սանկ բան մը, մաղը կրակի գոյնով...»:

— Էհ, հասկցայ. Լազուր, այնպէս չէ... շատ լաւ, ի՞նչ կ'ընէ:

— Կամաց կամաց ջերմեանդ կ'ըլլայ... բարեկամ, ամէն ուրբաթ, ժամը վեցին խաչուղիի աղօթքը կ'ընէ... և տարօրինակը ան է որ մինակ եղած ատեն բարձր ձայնով կ'ընէ:

— Կը փափաքիմ գիտնալ թէ ի՞նչ կը զուրցէ:

— Ահ, շատ դիւրին է այդ. յառաջիկայ ուրբաթ դուք ձեր խոստովանարանը մտէ՛ք:

ես ալ իմինս կը մտնեմ... Այն տեղէն Լա առաջին մասին մէջ ըսածները պիտի կտրեն նամ լսել, մնացածն ալ դուք կը լսէք:

— Աղէ՛կ գաղափար: Որոշուեցաւ լմնցաւ:

Յաջորդ ուրբաթ օրը, ժամը հինգը յիսուն անցած, երկու քահանաները իրենց տեղերը գրաւած էին: Եկեղեցին պարսպ էր, բոլորովին պարսպ, և արեւուն յետին շողերը անոր խորհրդաւոր հանգամանք մը կու տային:

Մի քանի վայրկեան սպասելէ յետոյ, ներքնագաւթին մէջ հնչեց խոշոր, երկաթազամ կօշիկներուն ձայնը:

Լուսթիւն և անշարժութիւն, Լազուրն է, որ անցնելով Եկեղեցւոյ մեծ շուագէն կ'երթայ երկրպագութիւն կ'ընէ Ամենասուրբ Սորհուրդին:

Յետոյ անմիջապէս խաչուղին կը սկսի բարձրաձայն, ճիշդ հետեւեալ կերպով, ըստ տեղեկատուութեան երկու ականջալուր վըկաներուն:

1. Կայան:— Յիսուս մահուան կը դատապարտուի: Այ անառակներ. մարդ մը աղէկ հրաշքներ գործելուն համար պատերազմական ատեանին յանձնել, ասիկայ անտանելի բան է: Եւ սա սրիկայ Պիղատոսը որ ականջ կը կախէ նա գարշելի բոտոտներուն... Հայր մեր եայլն:

2. Կայան:— Յիսուս ինչը չալկած: Աս պակաս էր: Չեն շատանար մարդը սպաննելով, պէտք է իրեն կրիլ տան նաեւ բոլոր սարուփարքան: Մեղայ՝ Աստուծոյ: Որչափ գէշ էին ուրեմն այն ժամանակ: Զինքը մահուան պատրաստող քահանայ մը իսկ չկայ քովը: Ահ, անպիտան սրիկաներ: Ահ խեղճ Յիսուս, որչափ տանջեցին քեզ... Հայր մեր եայլն:

3. Կայան:— Յիսուս առաջին անգամ կ'իյնայ: Անշուշտ ասանկ խաչով մը, որ երկու հարիւր կը կշռէր, և ծոմ բերնով: Մեղայ՝ Աստուծոյ: Ախ, եթէ ես իր տեղն ըլլայի, ամէնը մէկէն իրենց խաչերովը հոն վերը կը տնկեցնէի և իրենց կ'ըսէի. Ի՛նչպէս, աղէկ է այդ տեղ դամուիլը... Եւ մինչեւ հոն վերը պիտի տանէին... նոյն իսկ եթէ անմիջապէս հրացանի բռնուելու ըլլայի... ահաւասիկ... Հայր մեր եայլն:

4. Կայան:— Յիսուս մօրը կը հանդիպի: Այս ալ պէտք էր: Եթէ հրացանի բռնուելու գացած ատենն խեղճ մայրս ինծի հանդիպէր, ո՛չ, սիրտս չպիտի դիմանար, իրեն պիտի ըսէի որ, մէկդի երթայ, ասիկայ անտանելի պիտի ըլլար... Հայր մեր եայլն:

5. Կայան:— Կիւրենացին Յիսուսի կ'օգնէ: Ահաւասիկ պոնտ աղէկ մարդ մը: Բայց եթէ ես իր տեղն ըլլայի, աւելի լաւ կ'ընէի: Ինք պզտիկ ծայրը կ'առնու, բայց ես պզտիկ ծայրը Յիսուսին կու տայի, ես խոշորը կ'առնուի... կամ մանաւանդ ամբողջը կ'առնուի... Ահաւասիկ: Հայր մեր եւն...:

6. Կայան:— Կին մը Յիսուսին երեսը կը սրբէ: Ահա ուրիշ մըն ալ որ չի վախնար. կեցցեն կիները: Նման է ասի հիւանդանոցի ֆոյրերուն, որոնք փոխադրին, ժանտախտին վրայ կը խնդան. ի՛նչ աղուոր բան. չիտաւ կը արժանի է Պատուի խաչին...:

7. 8 եւ 9. Կայաններ:— (Երկու քահանաները այս կայաններէն շատ հեռու ըլլալով, Լազուրի խօսքը չեն կրցած հասկնալ):

12. Կայան:— Յիսուսի լաթերը կը հանեն: Աս, ո՛հ, շատ անտանելի է. անպիտան սրիկաներ, ի՛նչ մեծա ըրեր է ձեզի: Մեղայ՝ Աստուծոյ: Աս զգեստները ձերը չեն: Վրան բան մը չեն թողուր... Ահ կարգէ դուրս է աս տանջանքը... Եթէ ամբողջ զօրագունդ մը թունաւորած ըլլար, դարձեալ այսչափ խիստ տանջանքի չէր ենթարկուեր...:

11. Կայան:— Յիսուս կը խաչուի: Ահ, աւաղակներ... տես սըւոնք, կատղած շուներու պէս, կարծես ուրիշը տանջելէ հաճոյք կը զգան... Ի՛նչ դարչելի ժամանակներու մէջ կ'ապրէիր, խեղճ Յիսուս, և ի՛նչ դարչելի երկրի մէջ: Ո՛չ, բնաւ պիտի չուզէի ատանկ երկրի մը մէջ աշխարհ գալ:

12. Կայան:— Յիսուս կը մեռնի: Բայց չեմ կրնար հասկնալ թէ ինչո՞ւ համար աս սրիկաներուն դէմ բան մը չըրաւ: Եթէ ես իր տեղն ըլլայի այսպէս չպիտի ընէի: Բայց վարդապետը կ'ըսէ թէ այսպէս ըլլալու էր մեր մեղքին համար: Ասիկայ այնչափ չեմ հասկնար, բայց քանի որ վարդապետը կ'ըսէ ճշմարիտ ըլլալու է. Մեղայ՝ Աստուծոյ:

13. Կայան:—Յիսուս խաչէն վարկ'առնուի: Խեղճ կին: Խնչպէս ցաւէն չմեռաւ: Եթէ զիս աւանկ վիճակի մէջ մօրս տանին անտարակոյս մէկէն կը մեռնի: Մեղայ՝ Աստուծոյ: Կնոջ մը վրայ չգլխացին:

14. Կայան:—Յիսուս Կերեզմանը կը զրուի: Ահա՛ ընկյաւ: Խեղճ Յիսուս, քանի որ այդ ամէնը մօր մեղքին համար է, մեղքը շատ գէշ բան ըլլալու է: Սակայն եթէ ես քու տեղդ ըլլայի անոնց պատիժը կու տայի: Մեղայ՝ Աստուծոյ: Ահ, գարշելի՛ հրեաներ:

Դիւրաւ կը հասկցուի թէ որպիսի՛ յուզումով լսեցին երկու վարդապետները այս անտիպ աղօթածեւը, որ հնարուած է միամիտ բայց բարեխիտ մէկու մը կողմէ: Լապուրի գալով, աղօթքը լմնցնելուն պէս գնաց ծխախոտ գնեց. յետոյ ուրախ զուարթ սկըսաւ ելլել Ակումբին սանդուխը: Վերը հանդիպեցաւ Ք. վարդապետին որ մտերմաբար անոր ձեռքը սեղմեց և չարամտօրէն ըսաւ.

«— Լապուր, հը՛ն, հը՛ն, չեմ գիտեր ի՛նչ կ'ըլլայ... քաղքին մէջ կը անտնաս... ուշ կու գաս... պէտք է ժողովրդապետիդ գրել որ թուրքութեան սկսած ես... այնպէս չէ՞»:

Լապուր բոլորովին չփոխած չէր գիտեր ի՛նչ ըսէր, և կը սկսէր չիկնիլ շառագունիլ: Բայց քահանան ձեռքը անոր ուսերուն վրայ դնելով ըսաւ.

«— Հանդիստ եղիր ամէն բան աղէկ է, շատ աղէկ է, Աստուած եւ Բանականներու Տիրամայրը շատ գոհ են քեզմէ:»

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆ. — Արհի. Օգոստինոս Արքեպ. Սայեղեան, Բերիոյ վիճակաւորը, որ Պատրիարքարանի քաղաքական գործող համար Տեղապահ ընտրուած էր, նախապէս Պէյրութէն Ամեն. Հոգեւոր Տիրոջ հեռագրածին համեմատ Ուրլա-Չմիւռնիա-Պանարմա ճամբով երկուշաբթի օրը Պոլիս հասաւ իր քարտուղարին՝ Գեր. Գէորգ Վ. Կորդիկեանի հետ: Ն. Արհիապատուութիւնը Իզմիր երէք օր Վիեննական Միախմբարեանց վտանաւունքը հիւրընկալուած է և նոյն միջոցին աւստրիական հիւպատոսին և ուրիշներուն կողմէ պատուասիրուած է: Նոյնպէս Պանարմա ընդունուած է տեղւոյն ժողովրդապետին կողմէ: Պոլիս հասած օրը ա-

ռաւոտեան ժամը 7¹/₂ին, զինքը նաւուն վրայ դիմաւորեց Արհի. Յովսէփ Արքեպ. Ռոբոսեան, Կ. Պ. Փոխանորդը, հետն ունենալով Գեր. Թումայեան Յ. Մ. Վ. ք:

Արհի. Տեղապահը անոնց ընկերակցութեամբ ուղղակի եկաւ Կաթողիկոսարան, ուր ամէն բանէ առաջ փութաց իր յարգանքները մատուցանել Ամեն. Հոգեւոր Տիրոջ: Եւ ապա աթոռանիստ Եկեղեցւոյն մէջ պատարագելէն վերջը, Կաթողիկոսարանի մէջ իրեն յատկացուած սենեակը ելլելով, բարի գալուստի այցելութիւնները ընդունեցաւ: Կէսօրէն յետոյ իր քարտուղար վարդապետին հետ դատական նախարարին պաշտօնական այցելութեան գնաց և նախարարը բացակա ըլլալով, տեսակցեցաւ Կրօնից Տեսուչին հետ, որ շատ սիրալիր կերպով ընդունեցաւ զինքը և իրեն զգացուց առժամայ վարչականին պաշտօնէ դադրած լլլալը և հետեւաբար անմիջապէս գործերը ձեռք առնելու պէտքը: Նոյն օրը Իրիկուսն դէմ Ն. Արհ. Տէրութիւնը այցելութիւն տուաւ Քահանայապետական Կ. Պոլսոյ Նուիրակին:

* Դեկտ. 23ին, գլխաւոր առաքելոց Պետրոսի եւ Պօղոսի տօնին օրը, Ամեն. Հոգեւոր Տիրոջ անուան տարեգարձը կատարուեցաւ չքեղ կերպով: Առաւունքը Ա. Աստուածածին աթոռանիստ Եկեղեցւոյն մէջ Ն. Գերեջանկութեան պատարագին ներկայ գտնուեցան և Ս. Հաղորդութեան մօտեցան բազմաթիւ ժողովուրդ և Պատրիարքական կղերանոցին աշակերտները: Պատարագէն յետոյ Ն. Ամենապատուութիւնը Կաթողիկոսարանի սրահին մէջ ընդունեցաւ շնորհաւորութեան եկողները, որոնց մէջ կը գտնուէին բարձրաստիճան անձնաւորութիւններ: Պատրիարքական կղերանոցին աշակերտներուն կողմէ ոտանաւոր և արձակ ուղերձներ արտասանուեցան, որոնց երկուքը գրուած են այս թիւին մէջ: Ս. Ոսկեքերանի Թաղական դպրոցին աշակերտները, Ս. Աստուածածին Աթոռանիստ Եկեղեցւոյ դպրաց դասերն եւս խմբովին եկան և իրենց շնորհաւորութիւններն աւ յարգանքները մատուցին Ն. Գերեջանկութեան, որ յուզուած սրտով օրհնեց զիրենք և հրամայեց որ ամէնուն անուշեղէն բաշխուի: Նոյն օրը Ամեն. Տէրը ընդունեցաւ նաեւ շնորհաւորական հեռագիրներ և նամակներ:

* Նոր տարիի նախընթաց իրիկունը Ամեն. Տիրոջ հանդիսադրութեամբ ժամը (ը. ե.) 9ին, Ս. Աստուածածին Աթոռանիստ Եկեղեցւոյն մէջ Ս. Հաղորդութիւնը ի բազմոցի

դրուեցաւ, գիշերային և առաւօտեան ժամերդու թիւները կատարուեցան: Յետոյ Գեր. Կղեմէս Վրդպ. Աստուծոյ խօսեցաւ օրուան պատշաճ քարոզ մը որ վերջացաւ կէս գիշերէն քանի մը վայրկեան հտքը: Ապա Ամեն. Հոգեւոր Տէրը աղօթեց աշխարհի խաղաղութեան համար և Ս. Հաղորդութեամբ օրհնեց ժողովուրդը:

* * * Յունուար 1ին, ըստ վաղեմի սովորութեան քառասունժամեայ (Քուարանթոն) ջերմեռանդութիւնը սկսաւ Ս. Երրորդութիւն եկեղեցւոյն մէջ: Յունուար 3ին, որ օրը տեղի պիտի ունենար նոյնին հանգիստէն փակումը, Աւագ խորանին ետեւէն յանկարծ հրդեհ ծագեցաւ, առաւօտեան ժամը 10ին մօտերը, և հակառակ ներկաներուն ամէն ջանքերուն, այրեց նոյն աւագ խորանը և գմբեթին կից ընդունելութեան սրահը և ժողովրդապետին սենեակը:

Ծնորհիւ նոյն եկեղեցւոյ փոխան ժողովրդապետ Գեր. Յ. Վ. Սարուխանեանի անխնայ ջանքերուն, երեք օրուան մէջ եկեղեցին դարձեալ կարգադրուեցաւ, զարդարուեցաւ. աւագ խորանի կողմը վերէն վար երկնագոյն կտաւով ծածկուելով մէջ տեղը շարժական խորան մը դրուեցաւ և Յունուար 6ին Ամեն. Գերեքջանիկ Տէրը, բազմամեայ սովորութեան մը համեմատ, հայրապետական ձայնաւոր պատարագ մատուց և ապա ջրօրհնէքի արարողութիւնը կատարեց: Եկեղեցին լի էր հոծ բազմութեամբ: Արարողութեանց հանգիստտես եղան նաև աւատրիական դեսպանատան և հիւպատոսարանին երկու ներկայացուցիչները, որոնցմէ մին Սուրբ Աստուծի ատեն Աւետարանը համբուրեց:

* * * Յունուար 6ին, Ս. Աստուածածին Ս. Փրկիչ, Ս. Ոսկեբերան եկեղեցիներուն մէջ եւս ձայնաւոր պատարագ և ջրօրհնէքի արարողութիւնները հանգիստաւ կերպով տեղի ունեցան:

* * * Յունուար 2ին Վեր. Հ. Ստեփան Վ. Հարոնեանի Բանկայթիի Անարատ Յղութեան եկեղեցւոյն ժողովրդապետութեան Կոնգակը տրուեցաւ, ուր արդէն երկու տարիէ ի վեր

կը պաշտօնավարէր՝ մեծապէս գոհ ընելով իր մեծաւորները:

* * * Միջագիւղի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյն մէջ Յունուար 3ին ձայնաւոր պատարագ մատուցուեցաւ: Երգեցողութիւնները կատարեց Ս. Ա. Աթոռանիստ եկեղեցւոյ դպրաց դասը: Տեղւոյն ժողովուրդը որ երկար ատենէ ի վեր զուրկ մնացած էր այսպիսի հանդիսութիւններէ, խուռն բազմութեամբ ներկայ գտնուեցաւ:

* * * Յունուար 3ին, Ս. Ա. Աթոռանիստ եկեղեցւոյն մէջ, նոյն եկեղեցւոյ բարերար Մարկեան զերդաստանին ննջեցեալներուն համար հոգեհանգստեան պատարագ և պաշտօն կատարուեցաւ ի ներկայութեան Ամեն. Հոգեւոր Տիրոջ, Արհի. Արհի. Ռոքոսեան, Սիւլեան և Նազլեան Գերապայծառներուն, և Մարկեան Գերդաստանի անդամներուն, որ այս առթիւ, յատկապէս հրաւիրուած էին:

* * * Պանարաքիի, Բաղկեղանի և Սէն Լուիի կղերանոցներուն փակման հետեւանքով, հոն գտնուող հայ կաթողիկէ ուսանողները, Կաթողիկոսարանի չէնքին մէջ առժամապէս պատասպարուեցան: Յունուար 8ին, պարագաներուն և տեղւոյն ներածին չափ, դասախօսութիւնները սկսան:

* * * Յունուար 1ին, Արհի. Մատթէոս եւ պիսկոպոս Սիսեան, իր քահանայութեան Յիսնամեայ յոբելեանին բաղումը կատարեց Ս. Աստուածածին Աթոռանիստ եկեղեցւոյ մէջ Ս. Պատարագ մատուցանելով: Պատարագէն յետոյ Ն. Արհիապատուութիւնը շնորհաւորեցին Ամեն. Հոգեւոր Տէրը, Արհի. Կ. Պ. Փոխանորդ Յ. Արքեպ. Ռոքոսեան և Տրապիզոնի վիճակաւոր Արհի. Նազլեան և բաղմաթիւ քահանաներ:

Արձագանգ այս առթիւ իր ջերմ շնորհաւորութիւնները կը մատուցանէ Արհի. Մատթէոս եպիսկ. Սիսեանի և նաև իր ձեռնադրութեան ընկեր Արհի. Յուսիկ Արքեպիսկ. Կիւլեանի, և Գերյ. Նիկողայոս Թ. Ծ. Վ. Պաղչեանի:

* * * Ալգային Սիւնհոդոսին տրամադրութեան համեմատ, հետեւեալ կերպով կազմուեցան Կ. Պատրիարքական Աթոռին եկեղեցական ժողովները:

1. Աստուածաբանական

Գերյ, Գէորգ Գերապայծառ Թէրզիպաշեան
Գեր, Անտոն Վ. Իսկէնտէրեան
Գեր, Ռափայէլ Վ. Էքմէքճեան
Գեր, Կղեմէս Վ. Աստուրեան

2. Արարողական

Գերյ, Հ. Վրթանէս Ծ. Վ. Ուղունեան
Վեր, Հ. Ստեփան Վ. Հարոնեան
Վեր, Հ. Թէոտոր Վ. Սիրունեան
Գեր, Յովսէփ Վ. Ճամճեան
Գեր, Սաշիկ Վ. Աթանասեան

3. Մասնաբանական

Գերյ, Յովհաննէս Ծ. Վ. Թումայեան
Գեր, Պողոս Վ. Մկրտիչեան
Գեր, Ռափայէլ Վ. Էքմէքճեան
Յարգ. Յովսէփ Սարկաւազ Միւթէվէլեան

4. Ամուսնական խնդրոց առեան

Գերյ, Պողոս Թ. Ծ. Վ. Գաղրիկեան
Գերյ, Յովհաննէս Թ. Ծ. Վ. Կէտիկեան
Գերյ, Յովսէփ Ծ. Վ. Աբիկեան
Գերյ, Հ. Եղիա Ծ. Վ. Բիլճեան
Գեր, Յակոբ Վ. Մաղարեան

5. Խորհրդակցական

Գերյ, Յովհաննէս Գերապայծառ Միսքճեան
Գերյ, Գէորգ Գերապայծառ Թէրզիպաշեան
Գերյ, Յովհաննէս Թ. Ծ. Վ. Կէտիկեան
Գերյ, Յովհաննէս Ծ. Վ. Թումայեան

* * Բենեդիկտոս ԺԵ. Ս. Քահանայապետը ռազմավարերու բոլոր եպիսկոպոսաց մասնաւոր Շրջաբերականաւ յանձնարարեց որ իրենց վիճակին մէջ գտնուող պատերազմական գերիներուն քով քահանաներ զըրկեն՝ միսթարելու, օգնելու, նպաստ տալու և իրենց հայրենիքին հետ թղթակցութիւնը գիւրացնելու համար։ Բաց աստի, Ն. Սրբութիւնը պատերազմիկ պետութեանց առաջարկեց զինուորական ծառայութեան անընդունակ տկար գերիները փոխանակել և ամէնքն ալ սիրով ընդունեցան իր մարդասիրական առաջարկը։ Վեհ. Սուլթանը հետեւեալ պատասխանը տուաւ հեռագրով.

«Զինուորական ծառայութեան անկարող պատերազմական գերիներու փոխանակման նկատմամբ ձեր ներկայացուցած առաջարկները կ'ընդունիմ և այս մասին ձեր մարդասիրական զգացումները կը գնահատեմ»։ Ն. Սրբութիւնը Դեկտեմբեր 31ին հետեւեալ հեռագիրը ուղղեց Ֆրանց Եոզէֆ կայսեր.

«Վատահելով քրիստոնէական մարդասիրութեան զգացումներուն վրայ, որոնցմով տողորուած է Ձեր Վեհափառութիւնը, կը խնդրենք իրմէ այս աղետալի տարին փակել և նոր տարին բանալ վեհանձնական գործով մը, ընդունելով մեր առաջարկը՝ այսուհետեւ զինուորական ծառայութեան անընդունակ նկատուած գերիները փոխանակելու համար պատերազմիկ տէրութեանց միջև և» Ֆրանց Եոզէֆ կայսր հետեւեալ կերպով պատասխանեց. «Որապէս յուզուած քրիստոնէական մարդասիրութեան զգացումներէն որ Ձեր Սրբութեան ներշնչեցին զինուորական ծառայութեան անընդունակ գերիները փոխանակել առաջարկող իր վեհանձնական նախաձեռնութիւնը, արդէն Վատիկանի մօտ իմ զեսպանիս հեռագրաւ պաշտօն յանձնեցի իմացնել Կարդինալ Բարտուղարին թէ իմ կառավարութիւնս սկզբամբ ի բոլոր սրտէ կ'ընդունի այս վեհանձնական գաղափարը և պիտի փութայ հաւանութիւն յայտնող տէրութեանց հետ բանակցել, Ձեր Սրբութեան առաջարկը իրականացնելու համար»։ Նախագահ Բուանցարէ հեռագրած է. «Ի պատասխան Ձեր Սրբութեան բարեացակամ առաջարկին, կը փութամ հաւատուել Ձեզ թէ Ֆրանսա, վեհանձնութեան մասին իր աւանդութիւններուն հաւատարիմ մնալով, միշտ մարդասիրութեամբ վարուած է գերիներու հետ և զինուորական ծառայութեան վերջնապէս անընդունակ նկատուած գերիները փոխանակելու միջոցները կ'ուսումնասիրէ»։

Նոյնպէս իրենց կատարեալ հաւանութիւնն ու մեծ գոհունակութիւնը հեռագրեցին առ Նորին Սրբութիւն՝ Անգլիոյ, Գերմանիոյ և Ռուսիոյ վեհապետները, ինչպէս նաեւ Պելժիոյ և Սերպիոյ թագաւորները։

Կ Ա Ր Ե Ի Ո Ր Ա Ձ Դ

Մեր ամէն ընթերցողներուն ծանօթ եղող պարագայից և ներկայ բազմակնճիւղ դժուարութեանց բերմամբ ստիպուեցանք մեր Կարողիկէ Առձագանգ շաբաթաթերթը առժամաբար վերածել կիսամսեայ հրատարակութեան, ամսոյն 15ին և 30ին: Մեր բաժանորդները, կատարեալ գիտակցութիւն ունենալով ստիպիչ հանգամանքներուն, մեր այս որոշողութեան հանդէպ ներողամիտ պիտի գտնուին մանաւանդ երբ վերհասու ըլլան թէ մասնաւորապէս ներքոյ գծած ենք առժամաբար՝ հասկցնել ուզելով որ հաղիւ թէ այդ հարկեցուցիչ պարագայք փոքր ինչ թոյլատու գտնուին, անմիջապէս պիտի վերսկսինք թերթը ամէն շաբաթ հրատարակելու:

Այսու հանդերձ, այս նիւթական նուաղութիւնը փոքր ինչ անգգալի ընելու փութկոտութեամբ, պիտի աշխատինք բարոյական նոր զարկ մը տալ թերթիս պարունակութեան, ընտրեալ նիւթերու վրայ յօդուածներ հրատարակելով, որպէս զի մեր պատուական ընթերցողները առիթ ունենան գոհ մնալու այս ձեռնարկուած բարեշրջումէն: Նոյնպէս պիտի ջանանք խնամով և մանրամասն տեղեկայնել Հասարակութեանս վերաբերեալ բոլոր լուրերը, որոնք թէ՛ իրենց քանակով և թէ՛ իրենց որակով, այս է՝ ճշմարիտ աղբիւրէ բխելովը, անշուշտ պիտի շահագրգռեն ամէն կաթողիկէ Հայերը:

Կը փափաքինք ուրեմն որ Արհի. Վիճակաւորք, Գեր. Առաջնորդք և թերթիս ամէն բարեացակամ համակիրները հաճին իրենց վիճակաց և տեղեաց լուրերը մանրամասնօրէն տեղեկացնել մեզ ի հրատարակութիւն, ապահով ըլլալով որ բովանդակ հասարակութիւնը արդարացի պահանջով կ'ուզէ տեղեկանալ ամէն վիճակի շահագրգռական անցուդարձերուն, որոնք այլեւայլ տեսակէտներով պիտի ունենան իրենց օրինակելի օգուտն ու արդիւնքը:

Մեր համակիր ընթերցողներուն կ'ուզղենք մեր սրտագին շնորհաւորութիւնները, և կը մաղթենք ի Բարձրելոյն որ Անարատ Մօր Կուսին հզօր բարեխօսութեամբ արագ արագ փութացնէ այն երջանիկ օրը յորում Լոնսցեան պաշտօնագմունք... սկիւսցի սէր եւ արդարութիւն ի յերկրի:

*** Կը խնդրենք որ մեր բաժանորդները հաճին իրենց բաժանորդագինք մինչեւ ամսոյս վերջը ղրկել, ապա թէ ոչ պիտի ստիպուինք դադրեցնել թերթիս առաքումը:

*** Մեծաբոյն կանոնաւորութեամբ եւ դիւրութեամբ մեր պատասխանները պիտի տանք թերթիս միջոցաւ:

*** Հարկ չենք սեպեր յորդորել մեր պատ. ընթերցողները՝ որ աշխատին կարելի եղածին չափ շատ բաժանորդներ գտնել մեր օգտակար եւ ճշմարիտ կաթողիկէութեան ծառայող թերթին, որ միակն է իր տեսակին մէջ, եւ որով միայն հնար է ապահովապէս եւ անխարդախ տեղեկանալ Հասարակութեանս ամենակարեւոր լուրերուն:

Բ Ո Վ Ա Ն Գ Ա Կ Ո Ի Թ Ի Ի Ն

Դէպքեր եւ սկզբունքներ	1	Ս. Յակոբ Մծբնայ հայրապետ	8
Նուագ	3	Աստուծոյ արքայութիւնը	9
Անոր սուսըր տեսնելով եկամք	4	Այլեւայլ	10
Հին վաւերաբուրքեր	6	Կարեւոր ազդ	16

ԱՐՏՕՆԱՏԵՐ



ՏՆՕՐԷՆ-ԽՄԱՍԻՐԱՊԵՏ

ՅՈՎ. Մ. Վ. ԿԵՏԻԿԵԱՆ



ԳԵՈՐԳ Մ. Վ. ՅԵՐԶԻՊԱՆԵԱՆ

Տպարան Կ. Առձագանգ Շաբաթաթերթի, Բերա, Պայրամ փողոց քիւ 5, Կ. Պոլիս

ԲՍԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ.— Թուրքաց համար տա-
րեկան՝ 40 դհկ. արծ. վեցամսեայ՝ 20.— մէկ թիւ՝ 1 դհկ.—Արսասահ-
ման տար. Ծր. 10. վեցամս. 5.— Վճարմունք կանխիկ են.

ՀԱՍՑԷ.— Կարողիկէ Արձագանգ, Բերա, 5. Պայրաւ փողոց 5, 4.

Պոլիս:

GATOGHIGUÉ ARTZAKANK

Péra, 5 Ruc Baïram 5

Constant' nople

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ.— 1.— Արձագանգ կը հրատարակուի
Շաբաթ օրերը: 2.— Խմբագրութիւնս պարտաւորեալ չէ ան-
պատճառ կամ նոյնութեամբ հրատարակել իրեն զրկուած ու եւ
յօդուած: 3.— Կեղծանունով զրկուած յօդուածներու հեղինակը
կը պարտի իր խփական անունը ծանուցանել Խմբագրատեղին:
4.— Ձեռագիրները ետ չեն դարձուիր: 5.— Յօդուածներու
ձեռագիրները պէտք է զրուած ըլլան թուղթին մէկ կողմը մի-
այն: 6.— Ծանուցմանց համար մասնաւոր պայմանագրութիւնք
կը կատարուին: 7.— Հասցէի փոփոխութեան համար պէտք է
անհրաժեշտ երկու դահեկանի նամակագրոյժ ի միասին զրկել:

Տարբ. Սկզբունք Բրիտան. Վարդապետութեան. գին 2 դհկն.:

Տէր Կովտաս Բահանային վարքը. գին 5 դհկն.:

Եսթեր՝ ողբերգութիւն Ռասինի: Գին 3 դահեկան:

ՏՊԱՐԱՆ Կարողիկէ Արձագանգի Բերա, 5 Պայրաւ փ. 5: Տպարանս ըստ ամենայ-
նի ճշիւ և ի գիշտկի է՝ որ և իցէ ապագական գործոց համար: Այլ տպուին ամեն տե-
տակ ծանուցմունք, գիրքեր, տետրներ, հրատարակիչներ, քարտեր, քարդ-ատրէաներ,
մահազգներ, եւն. եւն. Գինները անմեղքի կերպով աժան են: Գեղեցկագիտական ճա-
շակի և ապագական մագրութեան կողմէ յաճախորդները անտարակոյս գոհ պիտի
ընան:

WIENER BANK-VEREIN

FONDÉ EN 1869

Capital entièrement versé 150.000.000 de couronnes

Réserves: 49.000.000

SIEGE CENTRAL:
VIENNE I. Schottenring

SUCCURSALES:

EN AUTRICHE-HONGRIE: *Agram, Aussig, Bielitz-Biala, Bozen, Bruenn, Budapest, Budweis, Czernowitz, Drohobycz, Friedek-Mistek, Graz, Innsbruck, Jaegerndorf, Karlsbad, Klagenfurt, Krakau, Lemberg, Marienbad, Meran, Oest, Nowosielitza, Pardubitz, Pilsen, Prag, Prosnitz, Przemyśl, Salzburg, St. Poelten, Stanislaw, Tarnopol, Tarnow, Teplitz, Teschen, Villach, Wr. Neustadt, Zwittau.*

EN TURQUIE: *Constantinople et Smyrne.*

SUCCURSALE DE CONSTANTINOPLE

*Siège à Galata, Place du Pont de Karakeuy
Agences à Stamboul, Péra et Scatari.*

Le Wiener Bank-Werein fait toutes opérations de Banque et notamment:

Avances en Compte-Courant contre dépôt des titres, effets de commerce ou marchandises;

Escompte d'effets de commerce;

Achat et vente de change sur l'Etranger;

Emission de lettres de crédit et ouverture d'accréditifs simples et documentaires;

Paiements télégraphiques en Turquie et à l'Etranger;

Encaissement d'effets, de coupons, d'obligations amorties ou favorisées aux tirages;

Exécution d'ordres de Bourse sur place et à l'Etranger;

Ouverture de Comptes-Chèques et de comptes-dépôts à intérêt;

Garde de titres, marchandises etc.

Achat de vente de monnaies diverses, matières précieuses, monnaies d'ornements;

Caisse d'Epargne à 3. 1/2 % d'intérêt.

Location de coffre-fort (à Galata et à Stamboul).

UN BUREAU DE VOYAGE (Représentant des Chemins de fer de l'Etat Autrichien) est attaché à l'Agence de Péra et délivre des billets pour tout l'Univers. Les voyageurs y trouveront toutes facilités possibles et tous renseignements désirés.